


4732



227445

1911



(34)

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՊՕԼՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ ՃԳ. ԹԷՐՁԵԱՆ

ԿՈԹՈՂԻԿԱՆ ՊԱՏՐԻԱՐքԻ ՏԱՆԻ ԿԵԼԻԿԻՈՅ



ՀԱՍՈՒԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՀԹՈՎՄ

1911

2001

2001

282

P-52

2010

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՊՈՂՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ ՃԳ. ԹԵՐՁԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐքԻ ՑԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Առաջին շաբաթ ՀԱՅ և Խորհ
Հայոց պատրիարք Տիգրան Առաք
Հայոց պատրիարք Տիգրան Առաք
Հայոց պատրիարք Տիգրան Առաք
Հայոց պատրիարք Տիգրան Առաք
Հայոց պատրիարք Տիգրան Առաք

Մատիսի Սուրբ Հաղորդութեան Համաժղովին եւեւ


ի 26 - 29 Յունիսի




ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՀՈՎՎՄ

1911





ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱՌԱՅ

ՊՈՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԿԹՁԵԱՆ

ԿՈԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐք ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳԱՀԵՆ ՀՐՈՎՄԱՅ

Առ Արհի. Արքեպիսկոպոսուն, Եպիսկոպոսուն,
և Գեր. Վարդապետ եւ առ համօրէն բարեպաշ
ուղղափառ ժողովուրդն մեր,
Ողջոյն եւ Աստուածաւանդ Օրհնուրին.

Պատուական Եղբարք, եւ Սիրեցեալ Որդեակֆ.

Ամենասուրբ Հազորդութեան հրաշալի խորհրդոյն ի պատիւ՝ Սպա-
նիոյ Մայրաքաղաքի փառաւոր եկեղեցիներու բեմերէն խօսող պերճախօս առ-
տենաբանները լսելէն ետեւ, այն հանդիսին մասնակցելու համար աշխարհիս
ամեն կողմերէն հան եկող Եպիսկոպոսները, քահանաները և անհամար քրիս-
տոնիաները տեսնելէն, Սպանիոյ վեհ. Թագաւորին և արքայական բարե-
պաշտ ընտանիեց և ջերմեռանդ ժողովրդեան առ Ամենասուրբ Խորհուրդն
Հազորդութեան ունեցած կենդանի հաւաստոյ հիանալի ցոյցերու վկայ ըլլալէն
և հացի ու գինուոյ պարզ տեսակներու խոնարհ կերպարանքի ներքեւ ներկայ
գտնուող և ձմարտապէս կենդանի Քրիստոսի թագաւորին յաղթական, ար-
քայավայել թափօրին ականատես ըլլալէն ետեւ, կ'ուզանք հազորդելու ձեզի,

53500-ահ



40045-67

Պատ . Եղբարք և Սիրեցեալ Որդեակը , Ամենասուրը Հաղորդութեան Համաժողովոյն Մեր սրտին ազգած զգացմունքը : Կը փութմանք այս նամակս ուղղելու ձեզի դարձեալ Հռովմէն և ըսելու թէ այն սուրբ օրերուն մէջ՝ Դուք ամենքնիդ Մեր սրտին զգացմանց և մտածութեանց առարկայ էիք : Միշտ Զեր վրայօք կը խորհէինք , Ձեզի համար անարժանաբար կ'աղօթէինք անմահ և անարատ Գաուին առջեւ և կը խնդրէինք Աստուծմէ որ ձեր իւրաքանչիւրին սրտին ազգուէին այն երկնային հոգեպարար զգացումներն որք բըղիած էին Յիսուսի սուրբ սրտէն , այս Ամենասուրը Հաղորդութեան խորհուրդը հաստատած պահուն :

Ա .— Մեր այս նամակն չ'սկսած կ'ուղենք սիրոյ և չնորհակալութեան ողջոյն մ'ուղղել Սպանիոյ Վսիմ . Ծիրանաւորին , Արհի . Եպիսկոպոսաց , Քրիստոսաէր Թագաւորին և Թագուհոյն և բարեպաշտ ժողովրդեան , որոնք Քըրիստոնեավայել զգացմամբ և հիւրասիրութեամբ ընդունեցին զՄեզ և պատուեցին , և տեսնելով մեր ամբողջ Նուիրապետութիւնն և Հայ—ուղղափառ Ազգն Մեր անարժան անձին վրայ՝ մեծ համակրանօք վարուեցան և Թագաւորէն սկսեալ մինչեւ ցյետին քաղաքացի , հոգեսոր իշխանութեան ամենամեծ տիտղոսաւորէն մինչեւ վերջին կղեր ողջունեցին զձեզ և Մեր միջոցաւ ձեզի բարեմաղթութիւններ ըրին : Բարեպաշտ Թագաւորն Ալինսսոս ԺՓ. երբ այն շքեղ հանդիսութեան վերջին օրը , ամենասուրը Հաղորդութիւնը իւր պարտասան մէջ կ'ընդունէր Թագաւորական պատուով , և երբ յուղեալ շեշտերով իւր անձը , ընտանիքը , համայն Սպանիան կը նուիրէր Ամենասուրը Հաղորդութեան և Յիսուսի Սուրբ Սրտին , փափագ յայտնեց և մաղթեց որ ամեն Ուղղափառ ազգեր նոյնը ընեն և Սպանիոյ ժողովրդեան կենդանի հաւատը ամեն տեղ ծաւալի , ամեն սրտերու վրայ իւր փրկարար ազդեցութիւնը գործէ և ամեն ազգ և ժողովուրդ միանան Ամենասուրը Հաղորդութեան սիրով , ըստ Սաղմուերգուին , « չ բարէ և չ վայելու չ բարէն եւբարէ է մատին » : (Սաղմ . ճլր . 1) : Արդարն Մենք հոն աշխարհիս ամեն ուղղափառ ազգերը հաւատոյ միութեամբ ժողուած կը տեսնէինք . և այս սերտ միութիւնը Մեր սրտին այն չափ յուղիչ զգացումներ ազդեց որ կ'ստիպուէինք հոն ի խոր սրտէ կրկնելու սուրբ Պետրոս Առաքելոյն Թափոր լեռան վրայ ըսած խօսքը . « Տէր , բարուն է մէլ առաջ լինելու » . (Մատթ . ԺԵ . 4 .) : Սակայն անմիջապէս մեր ականչներուն հնչեց տէրունեան հրամանը , « Օն արէ + ժնացուու + առաջ » . վասն զի Ամենասուրը Հաղորդութեան Համաժողովը լմցած էր : Այն նմանը չտեսնուած հանդէսները վերջացած էին : Եւ ահա ասոր համար պարտաւոր կը համարինք զՄեզ՝ չնորհակալութեան և երախտագիտութեան զգացումներ յայտնել այն հիւրասէր ժողովրդեան , Մատթի Սուրբ Հաղորդութեան Համաժողովէն ետեւ , որովհետեւ Քրիստոս Տէրն մեր , իւր մարմար և արեան խորհուրդը այն փառաւոր

և զարդարուած վերնասան մէջ հաստատելէն ետեւ չնորհակալութիւն մատոյց տանտիրոջ որ այն վայերուէ ընդարձակ բնակարանը իւր տրամադրութեան տակ դրած էր , « և գոհացեալ ելն » :

Բ .— Այդ հանդիսին Մեր սրտին մէջ թողուցած տպաւորութիւնը անմոռանալի է : Ուստի , Պատ . Եղբարք և Սիրեցեալ Որդեակը , կը փափաքինք քանի մը խորհրդածութիւններ ընել անոր վրայ այս առթիւ :

Մի՛ կարծէք որ Ամենասուրը Հաղորդութեան Համաժողովը կամ հանդէսը նոր գիւտ մըն ըլլայ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ : Ոչ , առաջին անգամ այդ Համաժողովը սկսած է Երուսաղէմ , վերնատան մէջ , Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բացարձակ հրամանաւ , Աւաստ Հինդշաբթի օր , « Նո շուշց յեւ վերնատուն մէ մէն , .. անո՞ պատրոսութիւն զՊատրիկ » . (Ղուկ . ԻԲ . 12 .) : Հոն ներկայ էին նոյն Յիսուսի շուրջը բոլոր առաքեալներն և ոգեորուած էին երկնային զգացումներով՝ այն առաջին Հաղորդութեան հանդիսի առջեւ : Մեր կինարար Փրկիչն այն օր իւր աստուածային սիրտը բացած ու յայտնած էր նմանը չի լսուած սքանչելի խրատներով , և իւր վերջին ճառը աւարտած էր Ամենասուրը Հաղորդութեամբ , այսինքն իւր Մարտինը և Արիւնը բաշխելով ամենուն : Այն՝ հաղորդութեան առաջին հանդէսն էր ուր մարդկացին բնութիւնը տեսաւ երկնից վար իջնալը , Աստուծոյ մը մարդկացին սրտերու վրայ առջի անգամ հանգչիլը : Ահա աւետարանը այն առաջին համաժողովին պատմութիւնը հետեւեալ բառերով կը վերջացնէ . « և գոհացեալ ելն » . (Մրկ . ԺԴ . 26 .) , փառաբանութեան երգը երգելով դուրս ելան : Դուք լաւ գիտէք որ այն օր Առաքելց սիրտը լիցուած էր ուրախութեամբ , երախտագիտութեամբ և զոհողութեան ոգեով : Այո՛ , ուրախութեամբ լիցուած էր , վասն զի կը տեսնէին իրենց երկնային Վարդապետին աստուածային սիրտը ընդարձակօրէն բացուած , իրենք ալ ներկայ էին այն սիրոյ յորդառատ հեղեղներուն , այն հեղեղները համատարած սիրոյ անհուն ովկիանու մը կազմած էին և Յիսուսի կաթիւներն անձին կաթիւլ մ' ամգամ չի պահելով , ամենը տուած էր իւր սիրելի տշակերտաց և ամբողջ աշխարհի , « ո՞ վասն յեւ և բարձաց հեղանի է ուստուն նոյն մուշաց » : Այո՛ , առաքելց ուրախութիւնը անսահման պէտք էր ըլլալ վերջապէս ներկայ գտնուելնուն համար այնչափ Աստուածային Փրկչին բերնով խոստացուած հրաշագործութեան սքանչելի իրականացման . « Ե՞ Ե՞ հայն կնեաց » . (Յովհ . Զ . 48 .) :

Գ .— Ահա այս սւրախութիւնն է որ մինք ալ կ'զգանք Մատթիւ հոգեսոր հանդիսութիւններէ վերջ , թէւ հեռու մեր Աթոռէն և մեր սիրելի ժողովրդէն : Սակայն միշտ աղօթեցինք հոն ի խոր սրտէ և կը շարունակենք աղօթելու որպէս զի Տէրն մեր Յիսուսի Քրիստոս մօտեցնէ այն երջանիկ օրը ուր մեր ամբողջ ազգը , ճանչնալով իւր կոչումը , Ամենասուրը Հաղորդութեան

առջև ծնրադրէ յարդանօք և ճմշարիտ երկրպագութեսն հոգւով։ Աղօթեցինք որ Աստուած մեզի ալ պարզեց այն մեծ մխիթարութիւնը օր մը կատարեւապէս չերմեռանդ տեսնելու մեր ամբողջ ժողովուրդը, Ամենասուրբ Հաղորդութեան առջև, ինչպէս ուրախ եղանք տեսնելով Եւրոպիոյ առաքելաջան Եպիսկոպոսաց ուրախութիւնը և կատարեալ մխիթարութիւնը, երբ իրենց ճշմարտապէս ուղղափառ և սուրբ կրօնքի մէջ հաստատուած ժողովուրդը, այն քաղաքակրթեալ և բազմաթիւ սղղափարներն, հյու հնազանդութեամբ Սրբազն Քահանայապետին և իրենց հոգեոր Հովիւներուն սերտիւ փարտծ և Աստուածային սիրով տոգորուած, կենդանի հաւատքով Ամենասուրբ Հաղորդութեան երկրպագութիւն կ'ընէին։ Հաղարներով կը հաղորդուէին ամեն օր, հաղարաւոր գիշերային այցելուներ Մատորիտիւ և բովանդակ Սպանիոյ եկեղեցիներու մէջ Ամենասուրբ Հաղորդութեան առջև կը հսկէին։ Երեսուն հաղարէ աւելի առաջին հաղորդութիւն առնող տղայք հրեշտակային անրիծ սրտերով մեր խորաններու Աստուածը կ'ընդունէին և Անոր մազթանքներ կ'ուղղէին։ Այո՛, ուրախ եղանք երբ հոն տեսանք հոյակատ եկեղեցիներու, մեծահարուստ պալատներու գեղեցկութեամբ զարդարուիլը, ամբողջ չէնքերու լուսաւորուիլը, փողոցներու մէջ կանգնուած յաղթական կամարները, հարսաւոններու և արհետաւորներու, գործաւորներու և պաշտօնեաններու, ու այլ և այլ յանձնաժողովներու իրարու հետ մրցիլը փառաւոր հանդէսներու պատրաստութեան համար, թագաւորէն սկսեալ մինչեւ յետին քաղաքացւոյն փոյթն ու եռանդը, Յիսուսի կենարար մարմնոյն հանդէսը պատուերու համար։ Ամբողջ Սպանիոյ ժողովրդեան համար գեղեցիկ երդ մը պատրաստուած էր ի պատիւ երկնային թագաւորէն, և երբ հիանալի միաձայնութեամբ, թագաւորն և թագուէին և հարիւր հաղարէ աւելի ներկաներ այդ երդով կը թնթացնէին երկնից կամարը, ուրախութեան արցունքներ կ'իջնային իրենց Եպիսկոպոսաց աչքերէն։ Աստուած իմ ինչ մխիթարութիւն, ինչ սքանչելի հանդէս, ինչ երկային ըզգացմունք։

Դ. — Դիտել կուտայ Պօսիւէ, թէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս երբ աշխարհ եկաւ, ծնաւ անշուք Բեթղեհէմի խեղճ ախոռին մէջ. նոյնպէս երբ աշխարհէս եկաւ, Գոզգոթայի խոնարհեցուցիչ և անպատիւ մահուան յանձնառու եղաւ. սակայն երբ Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատել որոշեց, այն ատեն փառաւորապէս զարդարուած վերնատուն մը ուզեց. « Յուզցէ նեղ վերնատուն մի մէջ և լուրդաբեալ » (Ղուկ. ԺԲ. 12.)։ Ահա երկու հաղար տարիէ այս Աստուածային կամաց արձագանքը չի տկարանալէ զատ, օր քան զօր աւելի կը մեծնայ. բոլոր աշխարհք կը տարտօնւի։ Նա կը շարունակէ մեղմէ պահանջելու որ ամեն տեղ, ամեն ժամանակ փառաւոր հանդէսներ կաղմակերպենք, եկեղեցիներ կառուցանենք Ամենասուրբ Հաղորդու-

թիւնը փառաւորելու, կը պահանջէ որ ի պատիւ իւր սուրբ Մարմնայն և Արեան չքեղ խորաններ կանգնենք ու զարդարենք, երկրպագուներ ժողվենք իւր շուրջը, յորդորենք բոլոր աշխարհքը յարգութիւն և սէր ցուցնելու Ամենասուրբ Հաղորդութեան, ահիւ և գողութեամբ Անոր ծառայութիւն ընենք, պատուենք անոր եկեղեցիները և խորանները, ուր հացի կերպարանքի տակ կը ծածկուի ինքն ոչ թէ միայն Մարդկութեամբ այլ և Աստուածութեամբը։ Մարդկային ազգը՝ աւելի ի մասնաւորի խօսելու համար՝ Սպանիոյ ճշմարտապէս քրիստոնեայ ժողովուրդը գիտցաւ համապատասխանել այս Աստուածային փափագանաց՝ տեսնելով իւր Աստուածոյն այնչափ խոնարհիլը, ոչնչանալը նոյն Ամենասուրբ Խորհրդոյն մէջ, խանդակառեցաւ, այնչափ սէր զգաց սրտին մէջ որ Հաղորդութեան մէջ ծածկեալ Աստուածոյն հարուստ և իրօք թագաւորական գահ մը պատրաստեց։ Զենք կրնար մոռնալ այս արքայական կառաց և թագաւորական ոսկելիչն Գահին փառաւորութիւնը, որ Մատորիտի փողոցներու մէջ իր վրայ տարաւ Ամենասուրբ Հաղորդութիւնը։ Այս արքայական հարուստ Գահը հաստատուած էր չորս մեծ անիւններու վրայ և կը յառաջանար բլրակի մը պէս, բնդարձակ պողոտաներու մէջ երկու կողմ շարուած զօրաց և հրամանատարներու մէջ տեղէն, վեհ շարժմամբ մը, որու մզիչ և շարժիչ կարգուած էին Սպանիոյ Բարեգործական հաստատութեանց գահերէց 12 պատուասոր աշխարհական անձնաւորութիւնք։ Այդ ժողովրդեան կենդանի հաւատքը և վառ սիրտը փառաւոր սրահի մը վերածած էր մայրաքաղաքի պողոտաները, այն գեղեցիկ և ընդարձակ փողոցները, այն սքանչելի հրապարակները։ Վերջապէս այն թագաւորանիստ քաղաքն և ամէն բան ամբողջապէս Ամենասուրբ Հաղորդութեան նուիրուած էր։ Գեղեցիկ արհեստներու արտադրութիւնք, այն հրաշակերտ պալատներու և տուններու առջև պարզուած մետաքսեայ հիւսուածքներն. ազգային ամեն առատաձեռնութեան գործքեր գիւտեր ամենասուրբ Հաղորդութեան համաժողովոյն տրուած էին։ Սրբութեան թափորի միջոցին ամեն կողմանէ կը գոռային ահազին ճայներով հարիւրաւոր թնդանօթներ, տիեզերաց թագաւորին և Արարչին գալուստը և անցքը աւետելով։ Երաժշտութեան անթիւ անհամար գործիքներ փոքրիկ մոնիանց հրեշտակային ձայներուն և սվաննամերու միացած, բաղաքին եւրեկի կեդրոններու մէջ քաղցրանուագ երգերով կ'ողջունէին Յիսուս թագաւորին յաղթանակը. « Ովսաննա՞ », օրհնեալ եկեղալ յանուն Տեառն. օրհնութիւն որդւոյ Դաւթի, ովսաննա՞ ի բարձունս »։ Ամեն տեղ, ամեն վայրկեան շարունակ օրհներգութիւնք, շարունակ փառաւարանութիւնք, յարատև ծափահարութիւնք կը լաւէին. բարձր չէնքերէն անընդհատ կը տեղային ծաղիկներ և անուշահոտութիւնք, ժողովրդեան խանդակառութիւնը երբեմն այն առտիճանի կը համնէր որ ո՛չ թէ միայն բացօղեաց տեղեր այլ և եկե-

ղեցիներու մէջ կեցցէներով և ծափահարութիւններով կ'ողջունէին Յիսուսի, Ամենասուրբ Հաղորդութեան, Սրբազն Քահանայապետի Անուններն։ Պատկեալ գլուխներ Ամենակարող Յիսուս Աստուծոյն առջև մինչև գետին կը խոնարհէին։ Պետական պաշտօնեայք, Հրամանատարք բանակաց և սպարապետք ի ծունը իջեալ կ'աղօթէին, հազարաւոր զօրքեր խոնարհցուցած մինչև գետին իրենց զէնքերն և սուրերն, պատուով և յարգանօք մինչև ի հող կ'իջեցնէին նաև իրենց ճակատն։ Այսպէս այն անմոռանալի հանդէսը որու երեք օր շարունակ ներկայ գտնուերու բաղդն և պատիւն ունեցանք, և որու փառքը հարիւրապատիկ աւելի մեծցուց արքայական ընտանեաց և նախարարաց ներկայութիւնը ընդհանուր աշխարհքին մեծ դաս մը, մեծ ուրախութիւն մը և մեծ յօս մը եղաւ։

Այո՛, Պատ. Եղբարք և Սիր. Որդեակք, այն ատեն կը մտածէինք որ թէե մենք ազգաւ, լեզուաւ, սովորութեամբ, արարողութեամբ այն ժողովրդէն տարբեր բայց ժամանակին անոնց հետ ունեցած շատ մը յարաբերութիւններու քաղցր յիշատակէն զատ, կաթողիկէ և Հռովմէական Ս. Հաւատքը աւելի նույրական և անքակտելի կապերով միացուցած է զմեզ այն դիւցազն Ազգին հետ։ Նոյն է անոնց հետ մեր հաւատոքը Ամենասուրբ Հաղորդութեան մասին, Սուրբ Աստուածածնայ հանդէպ, Հռովմայ Սրբազն Քահանայապետին կարգաւոր իրաւաբանական իշխանութեան պէտք եղած կատարեալ հստականութեան նըկատմամբ և ամեն հաւատալեաց մէջ. այո՛ անոնց հետ մեր սուրբ հաւատոյ միութիւնը բացայաց է։ Այն երկրի սուրբերն ալ մեր սուրբերն են, մեր բարեխօներն են. Սպանիա ծնած են Ս. Տօմինիկոս, Ս. Իգնատիոս Լոյոլա, Ս. Ֆրանչիսկոս Պօրձիա, Ս. Թերեզա և այլք, որոնց քարոզութիւնները, գրութիւնները և առաքինութիւնները մինչև մեր հասարակութեան անհաները հասած և շատ մը հոգեոր պտուղներ, գովելի արդիւնքներ յառաջ բերած են և բարիքներ ըրած են մեր մէջ։ Մեր Հասարակութիւնը իրաւամբ կը պարծենայ կաթողիկէ հաւատով ոչ թէ միայն Սպանիոյ այլ և ամբողջ Եւրոպիոյ ամեն քաղաքակիրթ ազգաց հետ ի հաւատու ունեցած միութեան համար։ Եւ ահա այս միութիւնը մեծ պարծանօք և զգուշութեամբ և ամենայն ձգութեամբ պահելու պարտաւոր են։

Ե. — Ստկայն, ինչպէս ըսինք, Համաժողովը լինցուծ էր, և պէտք էինք դուրս ելեւ այն զարդարուն վերնասմէն, ըստ Աւերաստանի. « Ե գոհացեալ ելն։ » Եթէ լաւ մտածենք Առաքեալներու վրայ, կը տեսնենք որ ամսնը այն առաջին համաժողովէն գուրս ելած ժամանակնին՝ անմըջապէս Յիսուսի հետեւեցան, և անոնց սիրոյ և զոհողութեան զգացումներով լեցուած էր։ Մատնութեան մէկ գաղափարն անգամ Առաքելոց սրտին սարսուռ կ'աղդէր. ամենքն ալ կը խոռվէին. ամենուն անուան Սուրբ Պետրոս Աստուածա-

յին վարդապետին ըսած էր. « Էստ Քեր պատրիարք Եօն մինչեւ ի մահ։ » Դէ. իր. 33.։ Բոլոր Առաքեալներն ալ նոյն տրամադրութեամ վրայ էին։ Բայց աւազ, այս խոստումը, այս տրամադրութիւնը պարապի ելաւ. այսու ամենայնիւ այս ալ ստոյդ է որ անդամ մը որ Առաքեալները չնորհքի մէջ հաստատուեցան, ուրախութեամբ սրտի վաղեցին դէպ ի մարտիրոսութիւն, ի սէր այն Աստուծոյն զոր ընդունած էին Աւեագ հինգտրթի օր, վերնատան մէջ, առաջին Հաղորդութեամբ։ « Զէ սէր Քրիստոսի սուէպէ զէւլ։ » կը գոչէր ամենուն կողմանէ Պօղոս Առաքեալ. (Բ. Կորն. ե. 44.) Այս զոհողութեան ոգւոյն մենք ամենքնիս ալ մասնակից եղած ենք. արդէն երբ սուրբ Մկրտութեան խորհուրդն ընդունած ժամանակնիս մեր կնքահօր բերնով խոստացանք և երդում ըրինք ամենէ բանէ հրաժարելով. Յիսուսի հետեւելու։ Ասկից զատ, այս անգամ մենք ալ ձեր անուան և ձեր կողմանէ այն փառաւոր համաժողովոյ մէջ Ամենասուրբ հաղորդութեան միշտ մօտ ապրելով, միշտ զայն ճաշակելով, այն վերնասունէն գուրս ելանք հաստատ առաջադրութեամբ և խոստումներ ըրինք անդրդուելի կամքով միշտ մեր Աստուծոյն պատկանելու, և միշտ և ամեն տեղ անոր հետեւելու ձեզի հետ ի միասին, մինչեւ ի մահ։ Այո՛, Պատ. Եղբարք և Սիրեցեալ Որդեակք, ձեզի հետ ասկից ետեւ պիտի նմանինք Առաքելոց, պիտի հետեւինք Յիսուսի, ջերմեռանդ և ուղղափառ ժողովուրդներու պէս. մենք ալ մեր հայրենեաց մէջ, մեր եկեղեցիներու մէջ, մեր ընտանեաց մէջ պիտի շարունակենք փոռարանելու. մեր Յիսուս Փրկիչը, զայն սիրելու, Անոր երախտազէտ մնալու և մեր կեանքն անգամ Անոր նուիրելու։ Ամեն անգամ որ ժողովնք եկեղեցի Սուրբ Պատարագի առթիւ, պիտի մտածենք թէ Ամենասուրբ Հաղորդութեան համաժողովոյն կը մասնակցինք, Յիսուսի հետ, և Առաքելոց հետ, քրիստոնեայ Ուղղափառ ժողովրդեան հետ. հոն ահիւ և դողութեամբ ներկայ պիտի գտնուինք ահաւոր խորհրդոյ սրբագործան, Սուրբ Պատարագի։ Եւ երբ եկեղեցիէ գուրս չելած երգենք ի միասին այս սքանչելի սաղմոսը, այս գոհութեան աղօթքը. զոր երգած էին Առաքեալներ ընթրիքէն ետեւ. « Օրնեցէց զէւր յամենացն ժամ, յամենացն ժամ, Օրնեցէն նորա և բերան է բերան է » (Սղ. լդ. 2.). մեր աշքին առջև պիտի բերենք Յիսուսի և իւր Աշակերտաց ամփոփ և զգածուած վերնասունէ գուրս ելլենին. « Ես Գոհացեալ ելն։ » պիտի մտածենք ամենուն ալ լուութեամբ Յիսուսի հետեւին մինչեւ Գեթսեմանի, ուր մեր սիրելի Փրկիչը մահուան սոսկալի հոգերու, վիշտերու և տագնապներու մէջ արիւն քրանեցաւ։ Այո՛, Ամենասուրբ Հաղորդութիւնը, սուրբ Պատարագը կը միացնեն զմեզ Յիսուսի Քրիստոսի հետ, որ մեր սիրոյ միակ նպաստակն է. կը միացնեն զմեզ Անարատ Յղացեալ կոյս Մարիմայ հետ, որ մեր երկնային Մայրն է. կը միացնեն զմեզ Ամենքն ալ կեցովէին. ամենուն անուան Սուրբ Պետրոս Աստուածա-

թեան Աստուծոյն ճշմարիտ Փոխանորդն է աշխարհիս վրայ . և այսպէս Ամենասուրբ Հողորդութիւնը , սուրբ Պատարագը հաստատ կը պահեն զմնզ կաթողիկէ սուրբ հաւատքի մէջ :

Զ . — Ամենասուրբ Հաղորդութեան մտածմունքը անբաժանելի է նաև Գեթսեմանիի , խաչի և Գողգոթայի մտածմունքէն . Վասն զի Յիսուս Քրիստոս վերնատունէն ելլելով գնաց անմիջապէս իւր չարչարանաց սրբավայրերուն , իւր Աշակերտաց հետ : Այսպէս Ամենասուրբ Հաղորդութեան հոգեոր միմիթարութիւններէն ետև , այս կենաց մէջ , յաճախ կը յաջորդեն չարչարանաց դառն բաժանիսէրը մեր ամենուն համար , մասնաւանդ ճշմարիտ Աստուծածաշտութեամբ ապրիլ ուղղոներուն համար , ըստ Առաքելոյն . « Ամենեին որ կամիցին Աստուծապաշտութեամբ կեալ ի Քրիստոս , ի հարսծանս կացցեն » . (Բ. Տիմ. Գ. 12.) : Միթէ չե՞նք գիտեր որ նոյն խակ մեր մայրը Եկեղեցի , մեր հայրը Սրբազնն Քահանայապետ և մեր Հասարակութիւնը , մասնաւորապէս մեր հայ կաթողիկէ Եկեղեցին այսօր Գեթսեմանիի և չարչարանաց տուփնապներով կը տառապին : Որչա՞փ Պիղատոններ , Հերովդէսներ կան աշխահքիս վրայ , որ կ'ուզեն օրինաւոր իշխանութիւնն ուսնակոխ ընել տալով , զմել Յիսուսէ բաժնել Քրիստոսի Փոխանորդէ Սրբազնն Քահանայապետէ զմել հեռացնել և զմել յաւիտենական մահուան դատապարտել : Ահա Տեառն Մերս Յիսուսի Քրիստոսի խօսքին համաձայն վորձին ամենուրել կ'այսաի , խարալել ընտեղելեն իրեւունամ . (Ղ. իր 31.) : Ուստի , այս վտանգով լի պարագաներու մէջ պէտք է որ ամեն քրիստոնեայ իր պարտքը լու ճանչնայ և կատարէ , որպէս զի Աստուծոյ ահաւոր դատաստանի առջև պարտաւոր չի մնայ : Խակ մեր Հասարակութեան գալով , մենք Աստուծոյ չնորհաց և ողորմութեան ապաւինելով վստահ ենք որ անիկայ անդրդուելի պիտի մնայ իւր հաւատքին մէջ , և գժոխային թշնամին պիտի չի յաջողի անոր վերջին հարուածը տալու : Մեր Հասարակութիւնը , ապահով ենք , Հռովմայ Սուրբ Գահէն պիտի չի զատուի . մեր ժողովուրդը Սրբազնն Քահանայապետի հրամաններուն , տրամադրութեանց ու յորդորանաց հնազանդ պիտի մնայ . Ֆեր ժողովուրդը պիտի գիմանայ նաև հալածանքներուն ըստ նտիսանձելի օրինակի մեր Սուրբ Նախնեաց :

Ո՛հ , ըսէք Մեզի , կարելի՞ է արդեօք կաթողիկէ Քրիստոնեայ անձ մը չվշտանայ , չցաւի տեմնելով այսչափ թշնամիներու խումբը Աստուծոյ գէմ , Եկեղեցւոյ գէմ : Եթէ ուրեմն անզգամութեան չոր օրինակը աշխարհիս վրայ ամեն տեղ տարածուած է , մենք ալ անոր առջև իրը անմատչելի պատուար դնելու ենք մեր հաւատքը , մեր սէրը , և եթէ հարկ ըլլայ նաև մեր արիւնը : Կը պատմուի թագ . գրքին մէջ թէ երբ Արիստում իւր հորը Դատի գէմ : Այսպէս գրքուն մէջ ամպտուղ կը մնան բուն ծառէն կտրուած և բաժնուած ճիւղերուն պէս : Ահա ասոր համար մեր առաջին պարտաւորութիւնն է , Սրբազնն Քահանայապետի կատարեալ ու անպայման հնազանդութիւն , որդիական սէր , և Անոր Ս. անձին և վարդապետութեան չերմեռանդ յարում : Առանց այս հաւատոյ , և առանց այս սիրոյ և յարումի անկարելի է հոգւոյ փրկութիւն . վասն զի նա կը ներկայացնէ զՔրիստոս , նա է միտութեան կապը հիմն Եկեղեցւոյ և հոգեւոր կենաց ակնազրիւրը : Յիսուս Քրիստոս իւր ոչխարներն ու գառնուկները մի միայն Սուրբ Պետրոսի և Անոր յաջորդներուն յանձնած է . և ահա այս հաւատքով և տրամադրութեամբ միայն կրնանք ճշմարտապէս չերմեռանդ ըլլալ Ամենասուրբ Հաղորդութեան , և յաճախ կը հաղորդուինք , ասով միայն բարեպաշտ կը քանակածած ապաւութեան մէջ , ապաւուածայինք մեր առաջնորդէին :

քանի՞ Արիսողոմներ ասլատամբած են իրենց հօրը գէմ , իրենց Աստուծային չօրը գէմ , իրենց հօրը գէմ , Սրբազնն Քահանայապետի գէմ , որ երկրիս վրայ Աստուծոյ Փոխանորդն է : Երանի՛ թէ կարենայինք մենք ալ մեր Եղբայրակմն ձեռքով ասլատամբ զաւակաց սիրտը վիրաւորել երեք հոգմոր հարուածներով , այսինքն , Ամենասուրբ Հաղորդութեան , Յիսուսի Ամենասուրբ Սրբին և Սուրբ Աստուծածածնայ սիրով : Երանի՛ թէ երկնային կենաց այս երեք հարուածները բաւական ընդարձակ վէրքեր բանալով մեր մուրեալ զաւակաց սրտին մէջ , զանսնք Աստուծայինք ողորմութեան ճամբուն առաջնորդէին :

Ե . Ուրեմն , Ամենասուրբ Հաղորդութիւն , Յիսուսի Ամենասուրբ Սիրտը և կոյս Մարիամ Աստուծածին , ահա մեր ձեռքը երեք ամենազօրաւոր գէնքեր , մեզի համար ամենասուրբական երեք չերմեռանդութիւններ : Բայց Անուն մ'ալ կայ որ այս երեք չերմեռանդութիւնները կը միացնէ իրարու , զանոնք արդիւնաւոր կ'ընէ և քրիստոնէական հոգին կիսդանի կը պահէ : Այսէ Սրբազնն Քահանայապետը Պիստ Ժ. որ է կինդանի և ճշմարիտ փոխանորդ Փրկչին մերայ Յիսուսի Քրիստոսի : Վասն զի , նա հիմն է Եկեղեցւոյ . և Դու էս , և է Եւրոպ այրէ վէտ վնեցից վնեցից էս » . (Մատթ. Ժզ:) Ինչպէս որ անկարելի է առանց հիման շնչքի մը հաստատութիւնը , այսպէս առանց Սրբազնն Քահանայապետի անկարելի է կատարեալ հաւատք ունենալ և Քրիստոսի Եկեղեցւոյն կենդանի անդամ ըլլալ և կազմել այն իմանալի և հոգեւոր շնչքը . և գիտենք ու կը հաւատանք որ , ո'վ որ այն սուրբ Հիմէն կը զատուի Քրիստոսին ալ կը բաժնուի :

Ուստի եթէ երբէք Ս. Եկեղեցիէ գուրս ալ կարենան խակ գտնուիլ , վերցիշնալ երեք չերմեռանդութիւնք և այլ հաւատալիք , բայց ստոյգ է որ , Աստուծածային հիմէն և կենդանութեան հիւթէն բաժնուած ըլլանուն , զուրկ կը մնան ճշմարիտ , յարատեւ բարեսպատութեան հոգիէն , օր ըստ օրէ կը տկարանան հոգեկան կենդանութեան մէջ և անպտուղ կը մնան բուն ծառէն կտրուած և բաժնուած ճիւղերուն պէս : Ահա ասոր համար մեր առաջին պարտաւորութիւնն է , Սրբազնն Քահանայապետի կատարեալ ու անպայման հնազանդութիւն , որդիական սէր , և Անոր Ս. անձին և վարդապետութեան չերմեռանդ յարում : Առանց այս հաւատոյ , և առանց այս սիրոյ և յարումի անկարելի է հոգւոյ փրկութիւն . վասն զի նա կը ներկայացնէ զՔրիստոս , նա է միտութեան կապը հիմն Եկեղեցւոյ և հոգեւոր կենաց ակնազրիւրը : Յիսուս Քրիստոս իւր ոչխարներն ու գառնուկները մի միայն Սուրբ Պետրոսի և Անոր յաջորդներուն յանձնած է . և ահա այս հաւատքով և տրամադրութեամբ միայն կրնանք ճշմարտապէս չերմեռանդ ըլլալ Ամենասուրբ Հաղորդութեան , և յաճախ կը հաղորդուինք , ասով միայն բարեպաշտ կը քանակած ապաւութեան մէջ , զանսնք Ամենասուրբ Սրբին և Սուրբ Աստուծածինք մեր առաջնորդէին :

նանք ըլլալ Յիսուսի Սուրբ Սրտին և Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնի :
 Ը . — Սակայն Յիսուս Քրիստոս չի կրնար անջատ մտածուիլ Գողգոթայէն : Նա ինչպէս ըսինք , Ամենասուրբ հաղորդութիւնը հաստատէլէն ետև Գողգոթա ելաւ , և հոն աւարտեց իւր աստուածային կեանքը խաչին վրայ : Այսպէս կ'ուզէ որ մենք ալ Ամենասուրբ Հաղորդութեան յիշատուկին միացնենք իւր չարչարանաց մտածականը , և իրեն նմանինք : Ո՞հ , Յիսուսի որչափ հաճելի են իւր չարչարանաց ջերմեռանդներն : Այս պատճառաւ կ'ազաշնք ձեզի Պօղոս Առաքելոյն հետ . հաղորդակից ըլլալու Յիսուսի չարչարանաց : Որչափ կը բաղձայինք որ մեր ամէն եկեղեցեաց մէջ « ճանապարհ խայի » ջերմեռանդութիւնը հաստատուէր , և մեր ժողովրդեան մեջ այս բարեպաշտութիւնը ընդհանրանար , որ այնչափ ներսութիւններով ճոխացած է : Առաջին ճանապարհ խաչին՝ Քրիստոս Տերն մեր ըրած է իւր ցաւադին Մօրը և իւր աշակերտաց հետ , Գողգոյն սիի ճամբուն վրայ , Երուսաղէմի մէջ : Արդէն մեր Երջանկայիշատակ Նախորդներն մեր թէմերու և առաքելութեանց շատերուն մէջ այս գովիլի և յոյժ օգտակար ջերմեռանդութիւնը ի վաղուց հաստատած և անկից ինչ մեծ հոգեոր բարիքներ քաղած են : Երբ մեր այս իղձը կատարուի , այն ատեն պիտի տեսնենք Առաջ Հինգշաբթիի Սուրբ Հաղորդութեան Համաժողովոյն արդիւնքն . որ է Յիսուս Քրիստոս խաչի վրայ գամուած և անոր Ամենասուրբ Սրտը բացուած զինուորին գեղարդեամբ , խաչի ստորագի կեցած է Անարատ Յղացեալ Կոյսը , կը հրաւիրէ զմեզ Ամենասուրբ Հաղորդութեան և խաչեու Յիսուսի առջե . հոն է նաև Ս . Յովհաննէս Առաքեալ որ կը ներկայացնէ Աստուածորդուոյն արեամբ գնեալ մարդկային Ազգը :

Թ . — Այս ամեն խորհրդածութիւններն ամենայն հաւատարմութեամբ և մտերմութեամբ ձեզի հաղորդելէն ետև , Պատ . Եղբարք և Սիրեցեալ Որդեակի իւր վերջարան կ'ուզէնք աւելցնել Հովուական նասակիս մէջ մեր այս երկայն և տաժանելի ճամբորդութեան նպատակն և արդիւնքը , որմէ պիտի հետեւցնէք այն ամեն պտուղները զոր ձեզմէ կը պահանջնենք արդար իրաւամբ :

Նախ . Ջեր ամենուն յայտնի է որ մեր կաթողիկասական պաշտօնին ամենավեմ նպատակը և մեր գլխաւոր ջանքը , ինչպէս սկիզբէն մեր Երջանկայիշատակ Նախորդները փոյժ տարած են , ասկից ետև ալ պիտի ըլլայ , մեր Նուիրապետութիւնը և մեր բանսուոր հօտը Հովովմայ սուրբ Աթոռոյն կապող զորը նոյնպէս ամրապնդեալ պահել : Եւ որպէս զի մեր և ձեր ամենուն ջանքերը անպտղութեան չգատապարտուին , ահա ամեն ձեռնարկէ տուած , հետեւելով Պօղոս Առաքելոյն օրինակին , փութացինք գալ Հովմ Սուրբ Պետրոսը տեսնելու . այսինքն , մեր պարտ ու պատշաճ յարգանքը և որդիական

հասզանգութիւնը մատուցանելու յոտս մեր Սրբազն Քահանայապետի , Քրիստոսի Եկեղեցւոյն անխսալ Վարդապետին և Աստուծոյ ճշմարիտ Փօխանորդին , և Անոր հայրական օրհնութիւնը խնդրելու և ընդունելու մեր և ձեր ամենուն վրայ : Վասն զի կը հաւատանք որ յաւիտենական փրկութեան հասնելու համար պէտք է որ Քրիստոսի Եկեղեցւոյն տեսանելի Գլխոյն անընդմիջական իշխանութեան ներքեւ ըլլանք . Քրիստոսի ոչխարհներ , գառնուկներ ըլլալու համար պէտք է որ , ըստ Աւետարանի , զմեզ Պետրոսը և անոր յաջորդներն արածեն . Արածեա՛ զետես իմ : Վասն զի Յիսուս Քրիստոս անոր միայն տուաւ երկնից արքայութիւնը բանալու և գոցելու իշխանութիւնը . և հետեւապէս վատահ ենք որ մեր նուիրապետութիւնը և հասարակութիւնը որչափ աւելի սերտիւ միացած մնայ Հռովմայ Սուրբ Աթոռոյն և անոր վրայ նստող արժանաւոր Սրբազն Հայրապետին այնչափ աւելի պտղաբեր պիտի ըլլայ ի սուրբ հաւատաս : Ուստի կը հրաւիրենք զձեզ այս որդիական կատարեալ հնազանդութեան առ Սրբազն Քահանայապետն մեր Պիտո ժ . և ջերմաջերմ կը յանձնարարենք ամենուն՝ աղօթելու , թէ Skr պահեցէ զնա անփորձ , անսասան եւ երցանիկ ընդ երկայն աւուրս :

Երկրորդ . վատահ ենք որ Յիսուսի Ամենասուրբ Սրտին ջերմեռանդութիւնը պիտի ազաաէ մեր Նուիրապետութիւնն և Հասարակութեանը ո՛ և է փորձանքէն և վատանգէն . և գերազգարար մեր մէջ ալ վարակելու սկած անտարերութիւնը և սուրբ Եկեղեցւոյ դէմ մոտած վիասակար սկզբունքներն , սոսկ այդ Ամենասուրբ Սրտին օրհնութեամբ պիտի անհետանան . բացուած վերքերը պիտի բուժուին : Ասով պիտի վերակենդանանայ մեր մէջ՝ մեր Նախնեաց անդրդուելի և վառ հաւատքը . սոսկ աստուածային և եղբայրական սէր պիտի բորբոքի մեր Հայ Կաթողիկէ Հասարակութեան մէջ , խաղաղութիւն պիտի տիրէ մեր ընտանեաց մէջ : Ահա այս պատճառաւ Բարիզի Մոնմարթր Եկեղեցին անցեալ Յունիս ամիսը , Յիսուսի Ամենասուրբ Սրտին նուիրեալ այդ փառաւոր Տաճարին մէջ , ձեր ամենուն համար սուրբ Պատարագ մատուցանելով , Յիսուսի Ամենասուրբ Սրտի Եղբայրութեան գրել տըւինք մեր ամբողջ Նուիրապետութիւնը , և հանդիսաւորապէս իրեն մատուցինք մեր Հասարակութիւնը . և ահա այն օրէն սկսեալ գիշեր ցորեկ մեր գիտման համար աղօթքներ կը մատուցուին հոն , որոց բարի արգասանաց կենդանի հաւատքով վատահ ենք : Ուստի գիտնալով որ այս ջերմեռանդութիւնը արդէն մեր Եկեղեցիներու շատերուն մէջ հաստատուած , և մեր հոգելից Քահանայք զայն ամենուն և ամեն տեղ քարոզելու կը ջանան , կը յորդուինք զձեզ և կը պարտաւորենք առհասարակ , ամեն թեմերու և առաքելութեանց մէջ ալ հաստատել այդ սքանչելի Եղբայրութիւնը , և տարածել ամեն ընտանեաց անհատներուն Յիսուսի Սուրբ Սրտին ջերմեռանդութիւնը .

քաջայոյս ենք որ Նա պիտի գթայ և պիտի ողորմի մեր տառապետլ Ազգին :
Մենք ու ձեզի հետ ի միասին ամեն վայրկեան սրտառուց հառաջանօք իրեն
պիտի պաղատինք . Ով Ամենասուրբ Սիրա Յիսուսի , աղորմեա'ց մեզ :

Երրորդ . բոլոր սրտէ և անկեղծաւոր հաւատով կը հաւատանք ձեր
ամենուն հետ թէ Տէրն Մեր Յիսուս Քրիստոս և Փրկիչ կենդանի է և կա-
տարելապէս ներկայ Ամենասուրբ Հաղորդութեան մէջ . և կարող է ամէն
հրաշք գործել իւր Աստուածային իշխանութեամբ նոյն Խորհրդոյն մէջ
ալ , ինչպէս աշխարհքիս վրայ այնչափնիր գործած է . խուլերու ականջը
բացած է կոյրերու աչքերը , կաղերու հրաման ըրած է քափերու , դիւա-
հարները ազատած է . հիւանդաց բժշկութիւն , մեռելոց յարութիւն պար-
գևած է : Կը դաւանինք և կը հաւատանք որ Ամենասուրբ Հաղորդութեան
մէջ նոյն Քրիստոս , նոյն Աստուած է , նոյն անձ , նոյն մարմին և նոյն ա-
րիւն է . թէև ոքողեալ հացի և գինուոյ կերպարանաց տակ : Նա , աղրիւր
ամենայն բարեաց կարող է մեր Նուիրապետութեան և հասարակութեան
ամէն բարիք ընել . գայթակղած միտքերը առողջացնել , մոլորեալ ոչխար-
ները ճշմարտութեան փարախին բերել , ազատել զմեղ ամեն չարիքէն , մեր
կղերին մէջ արծարծել սրբութեան եռանդը , արթնցնել ժողովրդեան մէջ
հաւատոյ ամողուելի ոգին և ամենուն հոգւոյն մէջ ճշմեռան-
դութիւն մը , և յաճախ և ամէն օր արժանապէս հաղորդուելու փափագը :
Վերջապէս կարող է խաղաղութիւն տալ մեղի և երջանիկ ընել ամենքնին .
Եւ ահա ասոր համար մասնակցեցանք Մատրիտի Ամենասուրբ Հաղորդու-
թեան տօներուն որպէս զի աղաչենք մեր Տիրոջ , ինչպէս օր մը կ'աղաչէր
հարիւրապետն իւր զուտակին առողջութեանը համար . ինչպէս ժողովրդա-
պետն իւր գտներ համար . ինչպէս Մարիամ և Մարթա կ'աղաչէին մեռեալ
Ղազարոսի համար : Մատրիտի փողոցներու մէջ պտտող կենդանի Յիսուսի
Քրիստոսի քովէն քալելով մենք ալ ացունքով և հաւատքով պաղատեցինք
կրկնելով . « Յիսուս , Որդի Դաւթի ողորմեա'ց մեզ » : « Տէ՛ր , ասա մի-
այն բանիւ և բժշկեացի' մանուկս իմ » . « Տէ՛ր , էթէ կամիա կարող ես » :
Ուստի կը յորդորինք ամենքնիդ քաջալերել զիրար ի բարիս , հրաւիրել
զիրար ամենօրեայ Հաղորդութեան . ժողվել փոքր տղաքը սրբութեան առ-
ջե , Յիսուսի առջե զանոնք վարժեցնել ճշմեռանդութեան : Բայց
որովհետեւ Ամենասուրբ հաղորդութեան ջերմեռանդութիւնը չի կրնար զա-
տուիլ Յիսուսի չարչարանաց մտածականէ , և պէտք է արծարծել Քրիստոնեայ
մտաց մէջ Գեթսեմանիի , չարչարանաց և Գողգոթայի սրտաշարժ խորհութե-
ները , և բնաւ չի մոռնալ ի սէր մեր խաչեալ՝ զՅիսուս Քրիստոս , և մեր աչաց
առջենքն զայն բնաւ չի հեռացնել և աղերսել թախանձագլն « Որ ի խային
բացեր զիրդանու աղբխւրդ . արք՛ եւ մեզ ծարաւեաց զրաժակ փրկութեան » Շը :

Զորբորդ . Կը հաւատանք վերջապէս և վստահ ենք որ կոյս Մարիամ
Աստուածածնայ բարեխօսութիւնը շատ ազդու է Աստուծոյ առջե , և Նա
մեր Նուիրապետութեան և Ազգին մասնաւոր պաշտպանն է , մանաւանդ Ա-
նարատ Յղութեան տիտղոսով . Նա կարող է հալածել մեր հոգեսր թշնամի-
ները և առ Աստուած դարձնել մեղաւորներն , մեղի համար ընդունիլ իւր
Յիսուս Որդիէն այն ամէն չնորհք ու բարիք որոց պէտք ունինք ներկայ պա-
րագաներու մէջ : Եւ ահա այս պատճառաւ գացինք նաև Լուսի ուխտա-
տեղւոյն ուր սրբավայրի խորհրդաւոր լրութեան մէջ կը կարծէինք լոել աղ-
քաս աղջկան մը երեցող Սուրբ Աստուածածնայ քայլերուն մխիթարիչ և
յուզիչ արձագանդն : Հոն հանդիպեցանք հազարաւոր ջերմեռանդ ուխտաւոր-
ներու , և երեք օր Սուրբ Պատարագ մատուցինք հրաշագործ արձանի առջե
ձեր ամենուն գիտման համար , և աղօթեցինք ի սրտէ , և զմեզ և մեր ամ-
բողջ հասարակութիւնը Անոր մայրական խնամոց ընծայեցինք : Ուստի կը
հրաւիրենք ամենքնիդ Սուրբ կոյս Մարկեմայ ջերմեռանդութեան , կը ինդրենք
որ ամենքն ալ իրեն բարեխօսութեան դիմեն և ազտէն ամենամեծ վստահու-
թեամբ , կրկնելով սա պաղատանքը . Անկամիսի առաջի յո Սուրբ Աստուածածին
եւ աղացենք զանարա գնոյսդ . Բարեխօսւա վասն անձանց մերոց , եւ աղացեա ըգ-
Միածին Որդիդ . Փրկել զմեզ ի փորձութենեն եւ յամենայն վանդից մերոց : (Շար .)

Ո՞հ ինչ մեծ մտատանջութեանց մէջ կը տառապինք գիշեր և ցորեկ
ձեր հոգւոց փրկութեան համար , մեր , այսափ ամիսներով երկարած օտա-
րութեան մէջ , զիսնալով որ սատանան կ'ուզէ կործանել և կարսնցունել այն-
չափ հոգիներ « Երջի եւ խնդրէ թէ զո՞ կրանից » (Ա. Գետ . Ե . 8) . և որչափ կ'ա-
զօթենք Աստուծոյ որ խնայէ իւր ժողովրդեան , օրհնէ՛ իւր ժառանգութիւնը
և ինքը հովուէ զայն Սուրբ Հոգւոյն չնորհքներով , և այս աշխարհքիս ամա-
կանութիւններէն անվնաս պահելով բարձրացնէ ամենքը յաւիտենական երա-
նութեան :

Տայր Աստուած , Պատուական Եղբարք և Սիրեցեալ Որդեակք , որ
մեր հայրական ձայնը համանէր ամենուն սրտին , և մեր Հասարակութիւնը նոր
ոգուով ու եռանդեամբ մը սկսէր հետեւիլ մըր ամէն յորդորներուն , որպէս զի
այս աքտրանաց վայրի մէջ այլ և այլ նեղութեանց համբերելով պատարեր
ըլլայ հոգեւորապէս , և արժանանայ վերջապէս երկնից Արքայութեան զոր
ձեր ամենուն ի սրտէ կը մաղթենք . Եղիցի՛ Եղիցի՛ :

Տուեալ ՚ի Հոգվմ Արտայ Դրան Մրոյն Պողոսի

15 Օգոստու 1911 . Մեր Կարողիկոսութեան երկրորդ Տարին :

Հ Պօլս Պետրոս Ժամանակակից
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՐԻՆ ԿԻԼԻԿԻԱՑ



4732

2013



4576